

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N 20/12**

Քաղ. Երեւան

27 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. նոյեմբերի 27-ի նիստում (արձանագրություն N 8.2) քննարկեց Տիգրան Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս. Կնյազյանի կողմից 2012թ. նոյեմբերի 11-ին ներկայացված «MARLEY PRODUCTION» (հայտի համարը 20120700) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ մասի «ա» ենթակետը, 125-րդ կետի 2-րդ ենթակետը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանների զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «MARLEY PRODUCTION» ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «MARLEY» (MARLEY PLASTICS LTD, Dickley Lane, (Lenham Maidstone, Kent NE 172DE(GB), IR 672799A) եւ «MARLEY» (Marley Tile S.A., Rue de l’Avenir 42, L-1147 Luxembourg (LU) IR 429218, IR 731630) ապրանքային նշաններին:

Համակցված նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված: Տվյալ դեպքում համեմատվող նշաններում բառային տարրը հանդիսանում է առաջնային ընկալման տարր, որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտադրումը: Վերոնշյալ ապրանքային նշաններում տրամաբանական շեշտադրումը ընկնում է «MARLEY» տարբերակող բառի վրա:

Նշված է, որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու»

մասին կարգի 106-րդ կետի 5-րդ մասի և 107-րդ կետի 14-րդ մասերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է մերժվել, քանի որ այն շփոթություն է առաջացնում հայտի ներկայացման թվականի դրությամբ նրա տարածքից դուրս օգտագործվող «MARLEY FURNITURE CO., INC.» ընկերության «MARLEY» համակցված ապրանքային նշանի նկատմամբ, որը գովազդվում է (<http://www.marleyfurniture.com>) ինտերնետային կայքում, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէ Գործակալության Որոշման հետ և գտնում է, որ Բողոքարկված Նշանը և գրանցված նշանները (այսուհետ՝ «Նշաններ» կամ «Համեմատվող Նշաններ») շփոթելու աստիճան նման չեն, չեն կարող շփոթություն առաջացնել սպառողների մոտ, Բողոքարկողը գործել է բարեխիղճորեն և, հետևաբար, Բողոքարկված Նշանը կարող է գրանցվել և համագոյատևել գրանցված նշանների (այսուհետ նաև՝ Գրանցված Նշաններ) հետ՝ ներքոգրյալ հիմնավորումներով և պատճառաբանություններով:

Բողոքարկողը գտնում է, որ Բողոքարկված և Գրանցված նշանները շփոթելու աստիճան նման չեն, քանզի դրանց ինչպես պատկերային, այնպես էլ բառային տարրերի տարբերությունները բացառում են սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հնարավորությունը:

Բողոքում նշված է, որ նշանների համեմատությունը ցույց է տալիս, որ Հայտարկված Նշանն էականորեն տարբերվում է այլ նշաններից՝ 1) իր վառ արտահայտված նարնջագույն բառերով, 2) երկու բառերից կազմված արտահայտությամբ, և 3) բավականին մեծ լատինական այբուբենի «R» տառով, որը հանդես է գալիս որպես երկու բառերի միասնական մեկ տառ (օգտագործված է մեկ անգամ երկու բառերի համար): Համեմատությունը նաև հստակորեն ցույց է տալիս, որ Գրանցված բոլոր Նշաններում առկա է ընդամենը մեկ բառ, մինչդեռ Հայտարկված նշանը կազմված է երկու բառից, որոնք յուրահատուկ ձևով միացված են լատինական այբուբենի «R» տառով: Հայտարկված Նշանում բառային տարրերից բացի որևէ այլ տարր առկա չէ, մինչդեռ Գրանցված N IR 672799A և IR 731630 Նշաններում առկա են մեկական պատկերներ՝ ծնկի իջած մարդը, թուղթը ձեռքին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Բողոքարկողը գտնում է, որ Հայտարկված և Գրանցված Նշանները շփոթելու աստիճան նման չեն և Գործակալության որոշմամբ վկայակոչված Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը չեն կարող խոչընդոտ հանդիսանալ Հայտարկված Նշանի գրանցման համար:

Համաձայն Օրենքի վերոգրյալ 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի. ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Օրենքի վերոգրյալ հոդվածի իմաստով (հաշվի առնելով նաև Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի պահանջները), Հայտարկված Նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե հիմնավորվում են հետևյալ երկու հանգամանքների միաժամանակյա առկայությունը.

եթե Հայտարկված Նշանը կարող է շփոթություն առաջացնել միջին հայ սպառողի մոտ ՀՀ տարածքից դուրս օգտագործվող Արտերկրյա Գրանցված Նշանների նկատմամբ, և եթե հայտը ներկայացնելիս Հայտատուն գործել է անբարեխիղճ:

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի իմաստով (հաշվի առնելով նաև Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի պահանջները), եթե վերոգրյալ երկու հանգամանքներից թեկուզև մեկի առկայությունը չհիմնավորվի, Գործակալությունն իրավասու չի լինի մերժել Հայտարկված Նշանի գրանցումը: Ներքևում, Հայտատուն հիմնավորում է, որ վերոգրյալ երկու հանգամանքներից և ոչ մեկն առկա չէ և, հետևաբար Հայտարկված Նշանը ենթակա է գրանցման:

Բողոքում նշված է, որ Արտերկրյա Գրանցված Նշանների իրավատերերը մտահոգված չեն Հայտարկված Նշանը Հայաստանում գրանցելու փաստով, քանզի ունենալով իրենց նշանը Հայաստանում գրանցելու հնարավորություն և Հայտարկված Նշանի գրանցման դեմ առարկելու Օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված երկամսյա ժամկետ, վերջիններս չեն գրանցել իրենց նշանը Հայաստանում և չեն էլ առարկել Հայտարկված Նշանի գրանցման դեմ: Նման մոտեցումը վկայում է այն մասին, որ Արտերկրյա Գրանցված Նշանների իրավատերերը, որպես շահագրգիռ կողմեր, չեն գտնում, որ Բողոքարկված Նշանը շփոթելու աստիճան նման է Արտերկրյա Գրանցված Նշաններին և դեմ չեն, որ Հայտարկված Նշանը գրանցվի Հայաստանում:

Ամփոփելով իր բողոքը՝ բողոքարկողը խնդրում է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել բողոքարկած ապրանքային նշանը հայտարկված ապրանքների համար:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. սեպտեմբերի 9-ին Տիգրան Հովհաննիսյանի կողմից ներկայացվել է «MARLEY PRODUCTION» (հայտի համարը N 20120700) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը: Նշվեց, որ բողոքում բերված են մանրամասն համեմատականներ գրանցված և բողոքարկվող նշանների միջև: Նաև բողոքարկողը ներկայացրել է գրություն 20-րդ դասի ապրանքների ցանկը կրճատելու վերաբերյալ, քանի որ խնդրարկվող

ապրանքների կրճատված ցանկը չի համընկնում գրանցված ապրանքային նշանի ապրանքների ցանկի հետ կոլեգիան բողոքարկված ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ առաջարկ ներկայացրեց բողոքարկման խորհրդին:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 12.09.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 07.11.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել Տիգրան Հովհաննիսյանի «MARLEY PRODACTION» (հայտի համարը 20120700) համակցված ապրանքային նշանը 20-րդ դասի դռների բռնակներ, փայտյա սեղաններ, մետաղյա սեղաններ, փայտյա զարդաքանդակներ և զարդանախշեր, փայտյա ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ, լոգոներ, գերբեր, հուշանվերներ, պատուհանների և այլ իրերի շրջանակներ, տարատեսակ ստենդեր, մուտքի դռներ, միջսենյակային դռներ, դարպասներ, սենյակների փայտյա պատեր, տնակներ (վանդակներ) կենդանիների (շների) և թռչուններ համար, դռների ոչ մետաղական պարագաներ, դռների ոչ մետաղական բռնակներ, ծաղկամանների պատվանդաններ, ծաղիկների ստենդեր, փայտյա մետլախներ, հայելիներ, ապակե իրեր, փայտյա տարբեր իրերի կամ պարագաների բռնակներ, տան, բնակարանի, գրասենյակի համարներ և նույնականացման այլ նշաններ, փայտյա արձանիկներ, տարաների փականներ, երեխաների տակդիրներ փոխելու համար պատին ամրացվող, պարագաներ, պատուհանի պարագաներ, փայտյա արվեստի գործեր ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան